ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

2026 թվականի թիվ 325 – Ա

**«ՍՎԱՐԱՆՑԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ԱՇԽԵՆԻԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄԸ ՆՈՒՅՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊԻՉ ԱՆՆԱ ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆԻՆ ՎԵՐԱՊԱՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասով և հիմք ընդունելով «Սվարանցի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Ա. Աբրահամյանի 08.07.2026թ.-ի դիմումը՝

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԵՄ.**

Երևանի թատրոնի և կինոյի պետական ինստիտուտի դահլիճում 2026 թվականի հուլիսի 10-ին ԿՋՆԱԿ հիմնադրամի կողմից կազմակերպվող «Ֆիլմ, ֆիլմ, ֆիլմ» հանրապետական աշակերտական նախագծերի ամփոփիչ փառատոնին մասնակցելու նպատակով հուլիսի 9-ից 10-ը ներառյալ գործուղման մեջ գտնվելու ընթացքում

«Սվարանցի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Աշխենիկ Աբրահամյանի պարտականությունների կատարումը վերապահել նույն կազմակերպության դաստիարակչական աշխատանքների կազմակերպիչ Աննա Մանուչարյանին:

08.07.2026

X

ՀԱՅԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Подписано: HARUTYUNYAN HAYK 1302840382

**ՀՀ Սյունիքի մարզպետին փոխարինող Հ. Հարությունյան**

2026թ. հուլիսի 8
Ք. Կապան